

ՍԻՐՈՅ ՄԱՍԻՆ

Մէրը առաջին պատուիրանն է: Թէեւ կանոնական շարքով 12-րդ գլուխը կը կազմէ, սակայն թէ հին օրէնքին մէջ՝ Մովսէսի, թէ նորին մէջ՝ Քրիստոսի Աւետարանին, բոլոր պատուիրաններէն աւելի մեծն ու առաջինը կը համարուի: Օրէնքին մէջ գրուած է. «Տէր Աստուածդ պիտի սիրես քու ամբողջ սրտովդ, ամբողջ գորութեամբդ եւ ամբողջ մտքովդ» (Բ. Օրինաց 6.5), «եւ ընկերդ՝ անձիդ նման» (Ղեւտ. ԺԹ. 19): Ինչպէս, որ քու անձիդ չար բան չես ուզեր, նոյնպէս ընկերոջդ պէտք չէ փափաքիս եւ ինչպէս, որ քու անձիդ խնամք կը տանիս եւ բարին կը ցանկաս, նոյնպէս պէտք է ընկերոջդ ցանկաս, որովհետեւ ընկերոջ սէրը Աստուծոյ սիրոյն հաւասար է: Ահա թէ ինչու Յովհաննէս աւետարանիչ կ'ըսէ. «Եթէ եղբայրդ՝ որ կը տեսնես եւ չես սիրեր, հապա Աստուած՝ որ չես տեսներ ի՞նչպէս կրնաս սիրել» (Ա. Յովհ. 4. 20): Ան որ կ'ըսէ, թէ կը սիրեմ զԱստուած, եւ եղբայրն ու ընկերը կ'ատէ, սոստ է որովհետեւ ան որ մարդասէր չէ, նաեւ աստուածասէր չէ:

Քրիստոս կ'ըսէ. «Միայն այն ատեն իմ աշակերտներս կ'ըլլաք եւ քրիստոնեաներ, երբ սիրէք զիրար: Ինչպէս, որ ես սիրեցի ձեզ, դուք եւս պարտիք սիրել զիրար» (Յովհաննէս 13.35): Քրիստոս ինք այնպէս սիրեց մեզ, որ իր անձը մահուան մատնեց մեզի համար: Նոյնպէս իւրաքանչիւր քրիստոնեայ պէտք է իր անձը մահուան յանձնէ իր եղբոր, ընկերոջ եւ հաւատակիցին համար: Արդ, ի՞նչ պատասխան պիտի տան անոնք՝ որոնք սիրոյ փոխարէն կ'ատեն ու կը չարախօսեն, կը մատնեն ու կը զրկեն: Յովնան Մանդակունի



ԱԻԵՏԱՐԱՆ ԶԱՇՈՒ ԱԻԵՏԱՐԱՆ

Պատարագին մէջ կարդացուելիք աւետարաններու հատուածներ պարունակող՝ տօնացոյցի կարգով շարուած հետզհետէ օրուան եւ տօնին յիշատակութիւնն ալ վրան նշանակուած է: Զափով մօտաւորապէս ատեանի աւետարանի նման է: Այդ աւետարանը սեղանին վրայ կը մնայ: Տէրունի օրերուն երկու մոմերով սեղանին մէջտեղ կը դրուի, երբեմն ներքեւը զարդարուն դաստառակ մըն ալ կ'աւելցուի: Պատարագի մէջ աւետարանի վերաբերման եւ աւետարան կարդալու, ինչպէս նաեւ «Այսօր դասք»-ի արարողութեան ալ կը գործածուի:

ԻԻՂԱԲԵՐԻՑ ԱԻԵՏԱՐԱՆ

Աւելի մեծադիր՝ քան առաջինները, իբր 45 հարիւրամեթր երկար եւ 25 լայն, եւ կը պարունակէ միայն չորս աւետարաններէն՝ Իւղաբերից համար կարդացուած հատուածները, աւելի խոշոր եւ աւելի զարդարուն գիրերով: Կը գործածուի միայն կիրակնօրեայ Իւղաբերից ընթերցման:

ՀԱՍՅԷ.



ԺԴ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 14 ՄԱՐՏ 2021 ԹԻԻ 11

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ՄԱՏՈՒԱԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ Ես. 65.-8-25 7.21 Փիլ. 3. 1-4.9 ՅԻՍՈՒՄ ԹՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ԴՈՒԿԱՍՈՒ 18.1-14

ՅԻՍՈՒՄ ԹՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ԴՈՒԿԱՍԻ 18.1-14

Յիսուս առակ մը խօսեցաւ իր աշակերտներուն, ցոյց տալու համար թէ պէտք է միշտ աղօթել՝ առանց վիատելու: Եւ ըսաւ. «Քաղաքի մէջ դատաւոր մը կար, որ ո՛չ Աստուծմէ կը վախնար եւ ոչ ալ մարդոցմէ կ'ամչնար: Նոյն քաղաքին մէջ այրի կին մըն ալ կար, որ իրեն կը դիմէր եւ կը խնդրէր. «Իրաւունքս պաշտպանէ հակառակորդէս»: Դատաւորը երկար ժամանակ մերժեց դատը տեսնել, սակայն ի վերջոյ ըսաւ ինքնիրեն. «Թէեւ Աստուծմէ չեմ վախնար եւ մարդոցմէ չեմ ամչնար, բայց քանի այս այրին նեղութիւն կու տայ ինձի, իր դատը տեսնեմ, որպէսզի մինչեւ վերջ քովս գալով զիս չանհանգստացնէ»: Ապա Տէրը շարունակեց. «Լսեցէք, թէ ի՞նչ կ'ըսէ անիրաւ դատաւորը: Իսկ Աստուած որքա՞ն պիտի համբերէ իր ընտրեալներուն կրած անիրաւութեան, պիտի չպաշտպանէ՞ զանոնք, որոնք զիշեր եւ ցերեկ իրեն կը դիմեն: Այո՛, կ'ըսեմ ձեզի որ անոնց իրաւունքը անմիջապէս պիտի պաշտպանէ: Բայց մարդու Որդին երբ գայ, արդեօք հաւատք պիտի գտնէ՞ երկրի վրայ»:

Այս առակն ալ պատմեց անոնց, որոնք կը պարծենային թէ արդար են եւ ուրիշները կ'արհամարհէին: «Երկու հոգիներ տաճար գացին աղօթելու. մէկը՝ փարիսեցի, միւսը՝ մաքսաւոր: Փարիսեցին մէկ կողմ կեցած, առանձին կ'աղօթէր. «Աստուած իմ, շնորհակալ եմ քեզմէ, որ ուրիշ մարդոց նման յափշտակող, անիրաւ, շնացող չեմ, կամ այս մաքսաւորին պէս ալ չեմ: Այլ շաբաթը երկու անգամ ծոմ կը պահեմ եւ իմ եկամտոսիս տասանորդը տաճարին կու տամ»: Իսկ մաքսաւորը մէկ կողմ կեցած, աչքերը առանց վեր բարձրացնելու կուրծքը կը ծեծէր, եւ կ'ըսէր. «Աստուած, ներէ մեղաւորիս մեղքերը»: Կ'ըսեմ ձեզի,- եզրակացուց Յիսուս,- ո՛չ թէ փարիսեցին, այլ՝ մաքսաւորը արդարացած գնաց տուն, որովհետեւ ով որ իր անձը կը բարձրացնէ՝ պիտի խոնարհի, եւ ով որ իր անձը կը խոնարհեցնէ՝ պիտի բարձրանայ»:

# ՍՈՒՐՔԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

## Ս. ՔԱՌԱՍՈՒՆ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՏՕՆԸ



Քառասուն Մանուկներու տօնը կը յիշատակէ Կապաղովկիոյ Հռոմէական գօրագունդի պատկանող քառասուն երիտասարդներու նահատակութեան օրը (մանուկ գրաբար լեզուով երիտասարդ կը նշանակէ եւ ոչ մեր հասկացողութեամբ երեխայ):

Հռոմէական բանակէն ներս խիստ հարցաքննութեան մը ընթացքին կը յայտնաբերուի այս երիտասարդ բանակայիներու Քրիստոնեայ ըլլալը: Քանի մը անգամ կ'առաջարկուի անոնց վերադառնալ հին աստուածներու, թէ ոչ՝ ենթարկուիլ հաշուեյարդարի: Երիտասարդները կը յայտնեն, թէ իրենք միշտ եղած են ու կը մնան հաւատարիմ Սեբաստիոյ թագաւորին, սակայն ուխտ ունին նաեւ անխախտ պահելու երկնաւոր թագաւորին նկատմամբ իրենց հաւատքը:

Իբրեւ պատիժ այս ընդդիմութեան, քառասուն երիտասարդները կը նետուին սառած լիճի մը մէջ: Կը յայտարարեն, թէ անոնք կ'ուզեն վերադառնալ հին աստուածներուն, լիճին ափին անոնցմէ մէկը միայն չղիմանալով կը վազէ սառած ջուրէն դուրս եւ հազիւ տաք ջուրին դպած յանկարծամահ կ'ըլլայ: Մնացած երեսունինն կը մնան անդրդուելի:

Գիշերով երկնային լոյսը կը ճառագայթէ լիճին վրայ ու լուսապսակներ կ'երեւին երիտասարդներուն գլուխներուն վրայ: Պահակներէն մէկը ականատես ըլլալով այս հրաշքին, դարձի կու գայ եւ Քրիստոնեայ կը դառնայ: Ապա անմիջապէս կը նետուի սառած լիճին մէջ ու կ'ընդունի փոխարինել ուրացող քառասուներորդ զինուորը:

Սեբաստիոյ մէջ քառասուն գմբէթով տաճար մը կառուցուեցաւ քառասուն երիտասարդներու յիշատակին, որ կանգուն մնաց մինչեւ Լեւկթիմուրի օրերը, այսինքն՝ 1405 թուականը: Սփիւռքի մէջ եւս կը գտնուին եկեղեցիներ, որոնք կը կրեն Քառասնից Մանկանց անունը, ինչպէս՝ Լիբանանի, Սուրիոյ եւ Ամերիկայի մէջ:

**Ս. Քառասնից մանկանց տօնը այս տարի կը զուգադիպի Շաբաթ, 13 Մարտին: Կիրակի, 14 Մարտ հանդիսաւոր Ս. եւ անմահ պատարագ կը մատուցուի Ս. Քառասնից Մանկանց Եկեղեցոյ մէջ, Պուրճ Համուտ:**

## ՀՈԳԵՒՈՐ ՊԱՏԳԱՍ

### ՏԻՐՈՋ ՀՆԱԶԱՆԴԻԼԸ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՃԱՄԲԱՆ Է

Անոնք ուռկանը ձգեցին, եւ երբ ուզեցին ետ քաշել՝ ձուկերու շատութենէն չէին կրնար (Յհ. 21.6): Յիսուս հրամայեց աշակերտներուն ուռկանը նաւակին աջ կողմը ձգել եւ անոնք անմիջապէս հնազանդեցան: Հետաքրքրական է աշակերտներուն հնազանդութիւնը, մանաւանդ, որ անոնք չէին գիտեր, թէ Յիսուսն էր իրենց հետ խօսողը: Իրենց հնազանդութեան արդիւնքը եղաւ այն, որ ուռկանը այնքան ձուկ լեցուեցաւ, որ չկրցան զայն նաւակին մէջ քաշել: Ասով, Քրիստոս ստրվեցուց իր աշակերտներուն, թէ իր խօսքին հնազանդիլը՝ կ'առաջնորդէ յաջողութեան:

### ՄԵՐ ՍՈՐՎԵԼԻՔ ՀՈԳԵՒՈՐ ԴԱՍԸ

Ուե՛է մարդ, որ կը հնազանդի Քրիստոսի խօսքերուն՝ յաղթական դուրս պիտի գայ: Տիրոջ հնազանդիլը մեզ պիտի առաջնորդէ առատ արդիւնք ձեռք ձգելու: Տերը գիտէ, թէ մեր կեանքի նաւակին որ կողմը պահուրտած ձուկեր, այսինքն՝ օրհնութիւններ կան: Կը բաւէ, որ հնազանդիւնք իրեն, եւ ահա մեր կեանքի նաւակը այդ օրհնութիւններով պիտի լեցուի:

### ՊԱՀԵՑՈՂՈՒԹԻՒՆԸ

Պահեցողութիւնը զէնք մըն է, որով կը կռուինք մեղքի ալիքներուն դէմ եւ կը ճամբորդենք դէպի երկինք:

Յովհան Ոսկեբերան

## ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ՛ՈՒՉԵՍ...

### ԵՐԲ ԿՈՒՉԵՍ ԳԻՏՆԱԿ, ԹԷ Ի՛ՆՉՊԷՍ ՊԻՏԻ ՅԱՅՏՆՈՒԻ ԱՍՏՈՒԾՈՅ ԱՐԳԱՐՈՒԹԻՒՆԸ Կարդա՛ր՝ ՍԱՂՄՈՍ 9

Ամբողջ սրտովս գոհուլթիւն պիտի մատուցանեմ քեզի, Տէ՛ր, եւ քու բոլոր սքանչելի գործերդ պիտի թուլեմ: Քեզմով պիտի ուրախանամ ու ցնծամ, եւ ներբողեմ քու անուշ, ո՛վ Բարձեալ:

Թշնամիներս նահանջի ճամբան բռնեցին, քու դիմացդ տապալեցան ու կորուստի մատնուեցան, որովհետեւ դուն, Ո՛վ արդար Դատաւոր, քու գահիդ բազմած՝ իմ դատս եւ իրաւունքս պաշտպանեցիր: Հեթանոսները յանդիմանեցիր, ամբարիշտները կորուստի մատնեցիր եւ անոնց անուշը յաւէտ ջնջեցիր: Թշնամին ընդմիշտ խորտակուեցաւ, անոնց քաղաքները հիմնահատակ կործանեցիր, եւ անոնց յիշատակն անգամ կորսուեցաւ:

Բայց Տէ՛րԸ կայ ու կը մնայ յաւիտեան:

Ան իր աթոռը նստաւ եւ պատրաստ է դատաստանի:

Արդարութեամբ պիտի դատէ աշխարհը ուղիղ դատաստան պիտի ընէ ժողովուրդներուն: Տէ՛րԸ ինք ապաւէն պիտի ըլլայ անիրաւուածին, ապաստան պիտի ըլլայ նեղութեան ժամանակներուն: Անոնք, որ քեզ կը ճանչնան, ո՛վ Տէ՛ր, քեզի պիտի վստահին, որովհետեւ դուն չէ՛ս լքեր անոնք, որոնք քեզի՛ պիտի կը դիմէն: Ներբո՛ղ երգեցէք Տիրոջը, որ Սիրոն կը բնակի, բոլոր ազգերուն մէջ պատմեցէ՛ք անոր գործերը, որովհետեւ ան՝ որ բոլոր ոճիրներուն համար հաշիւ կը պահանջէ՝ յիշեց տառապողները, չմոռցաւ անոնց աղաղակը:

### ՇԱՐՈՒՆԱԿԵԼ ՍԱՂՄՈՍԱԳԻՐՔԵՆ